ԽՍՀՄ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ՀՐԱՀԱՆԳ

## 1936 Թ.

## ԲԵՐՔԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 1936

30 JAN 2018

ԽՍՀՄ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ՀՐԱՀԱՆԳ

**1936 Թ.**

**ԲԵՐՔԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ**

ԵՐԵՎԱՆ 1936

ԽՍՀՄ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇՈՂ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 1936 Թ. ՄԱՐՏԻ 10-ԻՆ [redacted]

# ՀՐԱՀԱՆԳ

## 1936 Թ. ԲԵՐՔԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

### I ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1936 թ. բերքի դրությունը դիտելու համար սահմանվում է հետևյալ կարգը՝

1. Խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների և անհատական սեկտորի բերքի դրության գնահատականը յուրաքանչյուր կուլտուրայի վերաբերյալ տրվում է յերեք ժամկետներում՝ ցենտներով։ (Տես 4-րդ գլուխ)։

Ծանոթություն.— ա) դպրոցների, հիվանդանոցների և տեղական նշանակություն ունեցող այլ հիմնարկների ցանքերի վերաբերյալ, վորոնք չեն միացված նրանց գյուղատնտեսական աշխատանքներում, ինչպես նաև կոլտնտեսականների տնամերձ ցանքերը, հանրապետական և շրջանային կենտրոնների կողմից բերքի դրության մասին գնահատականներ չեն տրվում։

բ) Յեթե վերջին գնահատականը տալու մոմենտին մի վորևէ կուլտուրայի տարածության մի մասը հավաքված է լինում՝ բերքի դրության գնահատականը տրվում է ամբողջ տարածության համար-ներառյալ և հավաքված տարածությունը։

2. Ցանքերի բերքատվությունը գնահատելու ժամանակ պետք է նկատի ունենալ, վոր յուրաքանչյուր հաշվետու ժամկետի համար բերքատվության տեղեկությունները պետք է վերաբերվեն ցանքերի միենույն տարածությանը, այն է՝

ա. Աշնանացան հացահատիկների նկատմամբ գնահատականներ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
II-28102գր

պետք է տալ աշնանը ցանված տարածությանը՝ դուրս գալով դրանից ձմռան ընթացքում ցրտահարության հետևանքով փչացած տարածությունը Պետապի արձանագրությունների համաձայն։

Գարնանացան հացահատիկների նկատմամբ գնահատականները տրվում են գարնանը ցանված ամբողջ տարածության վերաբերյալ։

Որինակ. կոլտնտեսությունում աշնանը ցանված էր աշնանացան ցորեն 2000 հեկտար, որից ձմեռվա ընթացքում Պետապի արձանագրության համաձայն փչացել է 100 հեկտար։ Այս պայմաններում, վերոհիշյալի համաձայն, մեկ հեկտարից սպասվելիք բերքը բոլոր յերեք հաշվետու ժամկետների համար էլ պետք է որոշվի 1900 հեկտարի համար, չնայած հետագայում այդ 1900 հեկտարից որոշ մասը փչացել է ամառային անբարենպաստ պայմանների հետևանքով (որինակ՝ կարկտահարությունից, վնասատուներից՝ և այլն)։ Նույնը գարնանացանի վերաբերյալ — ամառվա փչացած տարածությունը դուրս չեն գալիս։

Ծանոթություն.— Յեթե աշնանացանի բերքի դրությունը որոշելու մոմենտին Պետապը դեռևս չի հասցրել գնահատելու ձմեռվա փչացումների հետևանքով առաջացած վնասները, ապա աշնանացանի ձմեռվա ընթացքում փաստորեն փչացած տարածության չափը (ձմեռվա անբարենպաստ պայմանների հետևանքով) սահմանվում է ցանքերի գնահատումները որոշող անձնավորության կողմից՝ նրա պատասխանատվությամբ։

Այսպիսով աշնանացանից պիտի համարել փչացած՝

ա) աշնանացանի այն տարածությունները, որոնք յենթակա յեն վերացանման և որոնք փաստորեն վերացանվել են.

բ) աշնանացանի փչացած այն տարածությունները, որոնք օգտագործվում են այլ ուղղակի նպատակի համար (որինակ՝ իբրև անասնակեր)։

Նախապես այս ձևով սահմանված փչացած ցանքերի չափը հաշվի չի առնվում բացառապես բերքի դրությունը որոշելու համար, քանի որ ցանքերի տարածության և բերքատվության վերջնական որոշումը կատարվում է միմիայն Պետապի արձանագրություններով հաստատված՝ փչացած տարածությունների հիման վրա։

Այն վայրերում, որտեղ Պետապն աշնանացանի ապահովագրում չի կատարում, ձմեռվա փչացումների չափը որոշվում է կոլտնտեսության նախագահի, գյուղխորհրդի նախագահի (անհատական



անկտորի գծով) և խորհտնտեսության դիրեկտորի կողմից, նրանց անձնական պատասխանատվությամբ։

բ) Նախորդ տարիներում ցանված բազմամյա խոտերի գնահատականները պետք է վերաբերվեն այն տարածությանը, որ թողնված է ընթացիկ տարում խոտ հնձելու համար։ Իսկ բնական խոտհարքների նկատմամբ—գնահատականները տրվում են խոտհարքի պլանով նախատեսված տարածությանը։ Հետևապես հաշվետու բոլոր ժամկետների տեղեկագրերի մեջ ցանքերի տարածությունները (յեվ խոտհարքների տարածությունները) պետք է մնան անփոփոխ։

3) Պտղատու ծառերի և հատապտուղների (ЯГОДНЫЙ) այգիներից սպասվող բերքը որոշվում է ցենտներով մեկ հեկտարից պտղաբեր հասակ ունեցող ծառերի հաշվով, իսկ ընդհանուր արտադրանքը որոշվում է պտղաբեր հասակ ունեցող ծառերի ամբողջ տարածության հաշվով։

Խաղողի այգիների բերքը որոշվում է պտղաբեր հասակ ունեցող այգիների տարածության վերաբերյալ։

Ծանոթություն.— Պտղաբեր հասակ հասկացվում է այն հասակը, որի ժամանակ տվյալ տեսակը սովորաբար պտուղ է տալիս։

4. Բերքի դրությունը գնահատելու ժամկետները հետևյալներն են՝

| Աշնան ցանքսեր և վաղ գարնան ցանքսեր, տարեկան ցորեն, գարի, վարսակ, հաճար | Ընդեղեններ, վիկա հատիկի համար, սորգո, կորեկ | Ցեղիպտացորեն, արևածաղիկ, չալթուկ | Տեխնիկական կուլտուրաներ, յուղաբույսեր, բանջարանոցային բույսեր, կերի արմատապտուղներ, կարտոֆիլ և բոստանի բույսեր | Պտղատու ծառերի և խաղողի այգիներ | Ցանովի խոտեր և բնական խոտաբույսեր |
|---|---|---|---|---|---|
| 15/VI | 15/VII | 15/VIII | 15/VII | Սերմավորներ 1/VII և 1/IX | 1/VI |
| 15/VII | 15/VIII | | 10/VIII | Կորիզավորներ 1/IV և 1/VII | 15/VI |
| 1/VIII | 1/IX | 15/IX | 15/IX | Խաղողանոցներ 15/VII և 15/VIII | 1/VII |

Ծանոթություն.— Ընդեղենների գնահատական տրվում է բոլոր ժամկետների համար առանձին-առանձին՝ վոսպ, սիսեռ և լոբի:

Թելի վուշը տրվում է տեխնիկական կուլտուրաների խմբում:

5. Ցանքերի, խոտերի և տունկերի դրության գնահատումը կատարվում է՝

ա) կոլտնտեսություններում՝ անձամբ կոլտնտեսության նախագահի կողմից՝ իր անձնական դիտողության և բրիգադիրների տված տեղեկությունների հիման վրա, ըստ վորում գնահատվում են միայն կոլտնտեսության համայնացված ցանքերը.

բ) անհատական սեկտորի վերաբերյալ՝ գյուղխորհրդի նախագահի կողմից՝ իր անձնական դիտողության և լիազորների տված տեղեկությունների հիման վրա.

գ) բոլոր սիստեմի խորհտնտեսությունների վերաբերյալ — խորհտնտեսությունների դիրեկտորների կողմից տեղեկությունները տրվում են բաժինների ագրոնոմիական անձնակազմի տեղեկանքների հիման վրա:

Խորհտնտեսության դիրեկտորը, կոլտնտեսության նախագահը և գյուղխորհրդի նախագահն անձնական պատասխանատվություն են կրում ինչպես իրենց կողմից հաղորդած գնահատականների ճշտության, նույնպես և բերքատվության մասին սահմանված ժամկետներին հաշվետվություն ներկայացնելու համար:

6. Բերքի դրության վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնում են սահմանված ձևով (տես հավելված №1) հաշվետու հաղորդագրության մեջ կուլտուրաները տեղավորվում են կցված անվանացանկում ցույց տված կարգով:

7. Կազմված հաշվետվություններն ուղարկվում են նույն որը (այսինքն՝ ամսի 1-ին կամ 15-ին).

ա) բոլոր սիստեմի խորհտնտեսությունների կողմից — բոլոր կուլտուրաների վերաբերյալ՝ իրենց տրեստների վարչություններին, իսկ հացահատիկների, վուշի և կանեփի մասին՝ նաև բերքատվությունը վորոշող համապատասխան միջշրջանային պետական հանձնաժողովի նախագահին: Կոոպերատիվ տնտեսությունները, բանվորամատակարարման բաժինները (Որս-երը) և այլն, բոլոր կուլտուրաների բերքի դրության վերաբերյալ հաշվետվությունները սահմանված ժամկետներին ներկայացնում են իրենց տնտեսական օրգանին և բացի այդ՝ հացահատիկների, արևածաղկի, վուշի և կանեփի վերաբերյալ՝ նաև



բերքատվությունը վորոշող համապատասխան միջշրջանային պետական հանձնաժողովի նախագահին.

բ) կոլտնտեսությունները ներկայացնում են գյուղխորհուրդներին, իսկ ՄՏԿ-ի կողմից սպասարկվող կոլտնտեսությունները, բացի նրանից, նաև ՄՏԿ-ին.

գ) գյուղխորհուրդների նախագահները — շրջհողբաժիններին:

Այս դեպքում գյուղխորհրդի նախագահը հողբաժնին ներկայացնում է հաշվետվություն միայն անհատական սեկտորի վերաբերյալ:

Կոլտնտեսությունների վերաբերյալ գյուղխորհրդի նախագահը վոչ մի հաշվետվություն չի կազմում[1], և ամսի 3-ից և 17-ից վոչ ուշ հողբաժնին է ուղարկում իր կողմից կոլտնտեսություններից ստացած հաշվետվությունները, դրանք նախապես ստուգելուց հետո: Յեթե գյուղխորհրդի նախագահը հայտաբերում է վոչ ճիշտ գնահատականներ, նա պարտավոր է այդ նույն հաշվաթերթիկի վրա տեղավորել իր յեզրակացությունը, սակայն առանց ուղղելու կոլտնտեսության կողմից տված գնահատականը:

8. ՄՏԿ-ի դիրեկտորը պետք է մանրամասն ստուգի յուրաքանչյուր կոլտնտեսության հաշվետվությունը, ուղղի վոչ ճիշտ գնահատականները և կոլտնտեսության գնահատականների մեջ կատարած ամեն մի ուղղում հաստատի իր ստորագրությամբ: Ուղղումներ մտցնելուց հետո, կոլտնտեսությունների հաշվետվությունները, այդ հաշվետվությունների ամփոփումների հետ միասին ՄՏԿ-ի կողմից ամսի 2-ից յեվ 17-ից վոչ ուշ հանձնվում են շրջհողբաժնին:

ՄՏԿ-ի դիրեկտորը գնահատման վերջին ժամկետի — հացահատիկային կուլտուրաների, արևածաղկի, վուշի և կանեփի տեղեկագրերի պատճեն ըստ առանձին կոլտնտեսությունների, նույն որն ուղարկում է բերքատվությունը վորոշող պետական հանձնաժողովի նախագահին:

ՄՏԿ-ի դիրեկտորն անհատապես պատասխանատվություն է կրում կոլտնտեսությունների վոչ ճիշտ տեղեկությունները հողբաժնին հայտնելու համար:

9. ԽՍՀՄ Հողժողկոմատի սիստեմում գտնվող յերկրային (մարզային) տրեստների վարչությունները, ամսի 4-ից և 19-ից վոչ ուշ,

[1]) Կոլտնտեսություններից ստացված տեղեկությունները գրանցվում են գյուղտնտեսական կամպանիաների մատյանում:

տեղեկություններն ուղարկում են ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի հաշվեվիճ բաժնին, իսկ պատճենը՝ հանրապետական Հողժողկոմատի հաշվեվիճ բաժնին, ԺՏՀՎ-ներ, և բերքատվությունը վորոշող հանրապետական հանձնաժողովի նախագահին։ Այլ սիստեմներում գտնվող տրեստների դիրեկցիաները նույն ժամկետներին տեղեկագիրն ուղարկում են իրենց ժողկոմատներին, իսկ պատճենները հանրապետական ԺՏՀՎ-ին և բերքատվությունը վորոշող պետական հանձնաժողովի նախագահին։

Անմիջականորեն ԽՍՀՄ-ի Հողժողկոմատին յենթակա խորհտնտեսությունների դիրեկտորները խորհտնտեսության վերաբերյալ տեղեկագրերն ուղարկում են ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի հաշվեվիճ բաժնին, իսկ պատճենը՝ յերկրային (մարզային) հողվարչության հաշվ.-վիճ. բաժնին, ԺՏՀՎ-ին և բերքատվությունը վորոշող պետական հանձնաժողովի լիազորին։

## II ՇՐՋՀՈՂԲԱԺՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԵՐՔԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Շրջհողբաժինը պարտավոր է, բլանկներն ու հրահանգներն ստանալուց, բերքի դրությունը դիտելու կարգի մասին անմիջապես հրահանգելու ՀԺԿ-ի սիստեմում գտնվող բոլոր խորհտնտեսություններին, ՄՏԿ-ին, կոլտնտեսություններին և գյուղխորհուրդներին։

Դրա համար շրջհողբաժինը՝

ա) Հրավիրում է ՄՏԿ-ի և խորհտնտեսությունների բերքի դրության վրա դիտողություն կատարող գյուղատնտեսների հատուկ խորհրդակցություն և նրանց ու խորհտնտեսությունների և ՄՏԿ-ների դիրեկտորների հետ միասին ու խորհտնտեսությունների և ՄՏԿ-ների վիճակագրերների մասնակցությամբ մշակում բերքի դրությունը գնահատելու համար հրահանգով սահմանված կարգը։

բ) Հրավիրում է գյուղխորհուրդների նախագահների ու քարտուղարների և ՄՏԿ-ի կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների նախագահների և հաշվետարների յենթաշրջանային խորհրդակցություններ և այդ խորհրդակցություններում ՄՏԿ-ի գյուղատնտեսների և շրջհողբաժնի աշխատանքների միջոցով հրահանգում է նրանց 1936 թվի բերքի դրությունը գնահատելու մասին։

Այս հրահանգչական խորհրդակցությունները պետք է անցկացնեն բոլոր շրջհողբաժինները, գյուղխորհուրդների և ՄՏԿ-ի կողմից



չսպասարկվող կոլտնտեսությունների, իսկ ՄՏԿ-ի՝ իր կողմից սպասարկվող կոլտնտեսությունների վերաբերյալ—բերքի դրությունը դիտելուց առաջ բերքատվություն վորոշող միջշրջանային հանձնաժողովի ղեկավարությամբ։

Այնուհետև շրջհողբաժինները պետք է խիստ հետևեն վորպեսզի յուրաքանչյուր հաշվետու ժամկետի վերաբերյալ հաշվետվությունները ստացվեն անպայման բոլոր ՄՏԿ-ներից, գյուղխորհուրդներից և կոլտնտեսություններից։ Հաշվետվություն չներկայացնող անձանց վրա պետք է անհապաղ տույժ սահմանել։

Այդ անձանց վերաբերյալ տեղեկությունները պետք է հաղորդվեն բերքատվությունը վորոշող համապատասխան միջշրջանային պետ հանձնաժողովի նախագահին։ Շրջհողբաժինն էլ ավելի խստությամբ պետք է հետևի հաշվետվության վորակին և տրված տեղեկությունների բերքի իսկական դրությանը համապատասխանելուն։

Այդ նպատակով հաշվառման տեսուչը, շրջգյուղատնտեսը և ինքը շրջհողբաժնի վարիչը պետք է սիստեմատիկ կերպով տեղում ստուգեն կոլտնտեսության և գյուղխորհրդի աշխատանքները՝ բերքատվության գնահատականը վորոշելու գործում։ Ցանքերի դրության մասին տեղեկություններ չներկայացնելու, այլև սխալ տեղեկություններ տալու համար, հանցավորները պետք է յենթարկվեն պատասխանատվության ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933 թ. մարտի 5-ի և 1933 թ. նոյեմբերի 27-ի վորոշումների հիման վրա։

3. Անհատական սեկտորի և ՄՏԿ-ի կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների հաշվետվությունները գյուղխորհուրդներից ստանալուց, շրջհողբաժինն առանց ուշացնելու անցնում է նրանց ստուգմանը։ Ստուգումը պետք է կատարվի անմիջականորեն շրջհողբաժնի վարիչի կամ նրա տեղակալի կողմից՝ գյուղատնտեսի և ժողտնտհաշվառման տեսչի մասնակցությամբ։ Հողբաժնի վարիչը՝ ՄՏԿ-ից բերքի դրության գնահատման վերաբերյալ ստացված տեղեկությունները շրջանային տեղեկագրի մեջ անցկացնելիս, պարտավոր է քննել ըստ էության և սխալ ճանաչվելու դեպքում տեղեկագրում մտցնում է իր կողմից ճշտված գնահատականը։

4. Յեթե ստուգման ժամանակ շրջհողբաժինն ուղղում է կոլտնտեսության կամ գյուղխորհրդի այս կամ այն գնահատականը, ապա այդ ուղղումը կատարվում է իր իսկ բլանկի վրա, նոր թիվը ուղղվող թվի վերևից գրելու միջոցով։ Ուղղված թիվը չի վոչնչացվում, այլ

միայն նրա վրայից գիծ է քաշվում, սակայն այնպես, որ այնուամենայնիվ այդ թիվը կարելի լինի կարդալ։

5. Բոլոր հաշվետվություններն ստուգելուց և ուղղումներ մտցնելուց հետո, շրջհողբաժինն ընդունած գնահատականների հիման վրա կազմում է ամբողջ շրջանի հանրագումարային ամփոփ հաշվետվությունը.

ա) բոլոր կոլտնտեսությունների վերաբերյալ առանձին, անկախ նրանից՝ ՄՏԿ-ն սպասարկում է թե ոչ,

բ) անհատական սեկտորի վերաբերյալ առանձին։

6. Բերքի գնահատման ամփոփված հաշվետվությունները կազմում են յուրաքանչյուր կատեգորիայի տնտեսության վերաբերյալ (կոլտնտեսություններ և անհատական սեկտոր) յուրաքանչյուր առանձին կուլտուրայի ցանքերի տարածությունների և ընդհանուր արտադրանքի հաշվետվությունների տվյալների գումարման միջոցով։ Ամփոփված հաշվետվության մեկ-մեկ հեկտարի բերքն ստացվում է յուրաքանչյուր առանձին կուլտուրայի ընդհանուր արտադրանքն այդ նույն կուլտուրայի ցանքերի տարածության վրա բաժանելու միջոցով։

7. Կոլտնտեսությունների և անհատական սեկտորի բոլոր ինչպես հացահատիկային, այնպես էլ տեխնիկական կուլտուրաների՝ բերքի դրության հաշվետվությունն ամսի 5-ից և 20-ից ոչ ուշ, շտապ փոստով պետք է ուղարկվի Հողժողկոմատին, իսկ հացահատիկային կուլտուրաների արևածաղկի, վուշի և կանեփի բերքի դրության մասին՝ նաև բերքատվությունը որոշող միջշրջանային հանձնաժողովի նախագահին։

Ծանոթություն.—Կոլտնտեսությունների կողմից ներկայացված հաշվետվությունները՝ հողբաժնի և ՄՏԿ-ի կողմից մտցված ուղղումներով ուղարկվում են բերքատվությունը որոշող հանձնաժողովի նախագահին՝ նրա առաջին իսկ պահանջի դեպքում։

Հաշվետվությունը ներկայացվում է սահմանված № 9 ձևով (տես հավելվածը)։

8. Հողբաժինը պարտավոր է նույն օրը Հողժողկոմատին ուղարկել հեռագրական տեղեկագիր հացահատիկների, արևածաղկի և գլխավոր տեխնիկական կուլտուրաների բերքի դրության գնահատականների մասին, յուրաքանչյուր կուլտուրայի և յուրաքանչյուր սեկտորի վերաբերյալ առանձին։ Խորհտնտեսությունները հեռագրական տեղեկագիրն ուղարկում են իրենց տրեստներին, իսկ ԽՍՀՄ ՀԺԿ-ի ոչ տրեստացած խորհտնտեսությունները՝ երկրային (մարզային), հողվարչություններին, հաշվեվիճբաժնին և ԽՍՀՄ Հողժողկոմատի հաշվեվիճբաժնին։ Հեռագրական տեղեկությունները պետք է չիֆրովկայի ենթարկվեն հետևյալ ձևով. «Հեռագիր հողբաժնից կամ խորհտնտեսությունից»։ Հեռագրի սկզբում ցույց է տրվում ամիսը, ամսաթիվը և կոլտնտեսությունների թիվը։ Այնուհետև հեռագրում ցույց է տրվում բերքի գնահատականը՝ ցենտներով։



Կուլտուրաները հեռագրում դասավորվում են իրենց համարների կարգով ըստ կցված անվանացանկի և չիֆրովկա յին արվում հետևյալ կերպ. աշնան տարեկան—03, վարսակ—08 և այլն։ Բերքը ցենտներով տրվում է մեկ տասնորդական նշանով։ Գնահատականը չիֆրովկա յն արվում յեռանիշ թվով, ըստ որում 10 ցենտներից պակաս բերքի առաջ գրվում է 0 (զրո). այդ դեպքում առաջին թվով գնահատականը ցույց տրվում ըստ կոլտնտեսությունների։ Օրինակ, յեթե աշնան տարեկանի բերքը կոլտնտեսություններում 12,5 ցենտներ է, իսկ վարսակը 8,5 ցենտ., ապա այդ պետք է ձևակերպել այսպես՝ 03125 08085

Բերենք մի օրինակ—

Օգոստոսի 15-ին 40 կոլտնտեսություններում աշնան տարեկանի բերքի գնահատականը 12,3 ցենտներ, վարսակը՝ 8,5 ցենտներ, կորեկը՝ 4,3 ցենտներ։ Մենատնտեսներում—աշնան տարեկան 9,7 ցենտներ, վարսակ—8,5 ցենտ., կորեկ՝ 3,5 ց. այս հեռագիրը չիֆրովկա յն արվում հետևյալ կերպ. առ 15/VIII 40 կոլխոզներում 03123 08085 07043 մենատնտեսներում՝ 03097 08083 07035 (կուլտուրաների անվանացանկը տես վերջում № 9 ձևը)։ Երկրային (մարզային) հողվարչության ՀԺԿ-ին տրվող հեռագրական հաղորդագիրը տարբերվում է հողբաժնի հեռագրական հաղորդագրից նրանով, որ առաջի հատվածում հաղորդվում է ոչ թե կոլտնտեսությունների քանակի տեղեկությունը, այլ շրջանների թիվը, ըստ որում 100-ից պակաս շրջանների թվի առաջ գրվում է 0։

Խորհտնտեսությունները հեռագիրը չիֆրովկա յին անում նույնպես, ինչպես և յերկրային (մարզային) հողվարչությունների հեռագիրը, ըստ որում հեռագրի առաջին հատվածում հաղորդվում են խորհտնտեսությունների քանակի մասին, իսկ յուրաքանչյուր կուլտուրայի բերքի գնահատականը տրվում է հնգանիշ թվով (յերկու թիվը—գրվում կուլտուրայի համար, իսկ յերեք թիվը գնահատականն է)։

## ՅԵՐԿՐԱՅԻՆ (ՄԱՐԶԱՅԻՆ) ՀՈՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՐԿՐԱՅԻՆ (ՄԱՐԶԱՅԻՆ) ՏՐԵՍՏՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*1. Յերկրային (մարզային) հողվարչությունները, հանրապետությունների հողժողկոմատները և յերկրային (մարզային) տրեստները պարտավոր են՝*

*ա) հրահանգել հողբաժիններին և ՄՏԿ-ներին, խորհտնտեսություններին, կոոպտնտեսություններին և այլն, և ժամանակին նրանց ապահովել տեղեկագրերի բլանկներով և մատակարարել այդպիսիններով խորհտնտեսություններին, ՄՏԿ-ին, կոլտնտեսություններին և գյուղխորհուրդներին։*

*բ) Բերքի դրության դիտողության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում հետևել, վոր յուրաքանչյուր հաշվետու ժամկետին տեղեկությունները անպայմանորեն ստացվեն բոլոր հողբաժիններից և խորհտնտեսություններից ճիշտ և սահմանված ժամկետին։ Տեղեկությունները ժամկետին չտվող հողբաժնի վարիչները, խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների դիրեկտորները յենթարկվում են վարչական տույժի, իսկ այդպիսին կրկնվելու դեպքում պատասխանատվության են յենթարկվում ԽՍՀՄ Ժողկոմխորհի 5 մարտի 1933 թ. և 27 նոյեմբերի 1933 թ. վորոշումների հիման վրա։*

*գ) Ստուգել հողբաժինների և խորհտնտեսությունների կողմից հաղորդվող տեղեկությունների վորակը, խնամքով վերլուծելու, շրջանները մեկնելու և դաշտերը դիտելու միջոցով։ Հողբաժինների, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների կողմից հաղորդվող տեղեկությունները կարող են ուղղվել միայն տեղում կասկածելի դեպքերն ստուգելու ժամանակ, բացառությամբ զուտ տեխնիկական սխալներից։*

*Շրջանները տեղեկագրերը Հողժողկոմատ, իսկ խորհտնտեսությունները իրենց կենտրոնին ներկայացնելիս կատարված ուղղումների համար անհրաժեշտ է ծանոթություններ անել։*

*դ) բոլոր դեպքերում էլ, յերբ հայտաբերվում է հողբաժինների և խորհտնտեսությունների անբավարար և թույլ աշխատանքները, անպայմանորեն հողբաժինները և խորհտնտեսությունները գործուղել պատասխանատու աշխատակից աշխատանքներն արագ կանոնավորելու նպատակով միջոցներ ձեռք առնելու համար։*



*ե) Շրջանների և խորհտնտեսությունների տեղեկությունների հիման վրա ըստ շրջանների և խորհտնտեսությունների՝ բերքի դիտողության մասին կազմում է ամփոփ հաշվետվություն և վոչ ուշ ամսի 8-ից և 23-ից ուղարկվում է Հողժողկոմատի հաշվառման և հաշվետվության վարչությանը և հանրապետության, յերկրի (մարզի) բերքատվության պետական հանձնաժողովի նախագահին։*

*Յերկրի (մարզի) մասշտաբով յուրաքանչյուր կուլտուրայի միջին բերքը վորոշվում է բոլոր շրջանների և յերկրամասերի ընդհանուր բերքը հաշվելու միջոցով, ընդունելով դրա համար ցանքսի տարածությունների պլանը մինչև հողբաժնից՝ կոլտնտեսությունների և մենատնտեսների փաստացի ցանքի տեղեկություններն ստանալը, իսկ հողբաժնից համապատասխան տեղեկություններն ստանալուց հետո արդեն ընդունել փաստացի ցանքի տարածությունը։*

*Հանրապետության մասշտաբով բանջարանոցային կուլտուրաների, պտղատու և խաղողի այգիների միջին բերքը հաշվվում է շրջանային միջինների թվաբանական միջինը դուրս բերելու միջոցով։*

*Յերկրային (մարզային) հողվարչություններին, հանրապետությունների հողժողկոմատներին և յերկրային (մարզային) տրեստներին արգելվում է՝ հողբաժինների և խորհտնտեսությունների տվյալներով, տեղեկագիր ներկայացնել ընդգրկելով յերկրի, մարզի և հանրապետության ցանքերի տարածությունների 75%-ից պակաս։ Յերկրի (մարզի) հողվարչության, հանրապետությունների հողժողկոմատների ղեկավարները և յերկրային (մարզային) տրեստների դիրեկտորները տեղեկագիր չներկայացնելու համար նույնպես պատասխանատվություն են կրում, ինչպես և հողբաժինների վարիչները և խորհտնտեսությունների դիրեկտորները։*

*Տեղեկագրի արդյունքներն ըստ վարչական շրջանների ուղարկվում են ԽՍՀՄ Հողժողկոմատի հաշվառման և հաշվետվության վարչությանը շտապ փոստով, և պատճենը ներկայացնում են յերկրի (մարզի) կենտրոնական պետական հանձնաժողովի լիազորին ու յերկրի (մարզի) ժողտնտեսության հաշվառման վարչությանը, իսկ հացահատիկային կուլտուրաների, արևածաղկի և գլխավոր տեխնիկական կուլտուրաների գծով (տես վերևում) արդյունքներն ամբողջ մարզի համար հաղորդվում են հեռագրով վերևում բերված շիֆրով։*

Ներքոհիշյալ կուլտուրաների մասին տեղեկությունները տրվում են հետևյալ կերպ.

| | |
|---|---|
| 1. Արախիս<br>2. Սեուկ (рыжик) | Միայն մեկ անգամ՝ 15/IX |
| 3. Կերի ճակնդեղ<br>4. Շաղգամ<br>5. Տուրնեպս<br>6. Կերի գազար<br>7. Ցայծնամրուք | Առաջին յերկու ժամկետներում տեղեկություններ տրվում են ամբողջ կերի արմատապտուղների մասին, իսկ վերջին ժամկետի համար ամբողջական և առանձին կուլտուրաների մասին։ Ամբողջ կուլտուրաների խմբերի համար նշված «արմատապտուղների» մասում։ |
| 8. Ցեղխպտացորեն սիլոսի համար<br>9. Արևածաղիկ սիլոսի համար | Առաջին ժամկետներում տեղեկությունները տրվում են ամբողջ սիլոսային կուլտուրաների մասին, իսկ վերջին ժամկետում ամբողջ և առանձին կուլտուրաների մասին։ Ամբողջ կուլտուրաների համար նշված «սիլոսային» մասում։ |



Հողբաժնի հաշվ. ձև № 9 ԽՍՀՄ
Կենտգործկոմի և ԺԿԽ-ի վորոշման հիման վրա հաստատում
եմ ԽՍՀՄ Պետ. պլանի ԺՏՀԿՎ պետ. տեղեկալ ՊՈՊՈՎ
Ներկայացվում է Հողժողկոմատին բերքատվության պետական հանձնաժողովին հատուկ սահմանված ժամկետներով։

Շրջան . . . . .

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՔԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առ «________» ____________ 1936 թ.

| №№ ը. կ. | Կուլտուրաների անունները | Կոլտնտեսության | | Մենատնտեսներ | |
|---|---|---|---|---|---|
| | | Ցանքի տարածությունը (հեկտ.) | Միջին բերքը մեկ հեկտարից (ցենտ.) | Ցանքի տարածությունը (հեկտ.) | Միջին բերքը մեկ հեկտարից (ցենտ.) |
| 1 | Աշնան ցորեն . . . . . | | | | |
| 2 | Աշնան գարի . . . . . | | | | |
| 3 | Աշնան տարեկան . . . . | | | | |
| 4 | Գարնան ցորեն . . . . | | | | |
| 5 | Գարնան գարի . . . . . | | | | |
| 6 | Հաճար . . . . . . . . | | | | |
| 7 | Կորեկ . . . . . . . . | | | | |
| 8 | Վարսակ . . . . . . . | | | | |
| 9 | Չալթուկ . . . . . . . | | | | |
| 10 | Ցեղխպտացորեն . . . . | | | | |
| 11 | | | | | |
| 12 | Սիսեռ-վոլոր . . . . . | | | | |
| 13 | Վոսպ . . . . . . . . . | | | | |
| 14 | Լոբի-բակլա . . . . . . | | | | |
| 15 | Վիկա հատիկի համար . | | | | |
| 16 | Կտավհատ . . . . . . . | | | | |
| 17 | Կանեփ . . . . . . . . | | | | |
| 18 | Քնջութ . . . . . . . . | | | | |
| 19 | Ծորուկ . . . . . . . . | | | | |
| 20 | Արևածաղիկ . . . . . . | | | | |
| 21 | Գերչակ . . . . . . . . | | | | |
| 22 | Բամբակ . . . . . . . . | | | | |

| №№ ը. կ. | Կուլտուրաների անունները | Կոլտնտեսության | | Մենատնտեսի | |
|---|---|---|---|---|---|
| | | Ցանքի տարածությունը (հեկտ.) | Միջին բերքը մեկ հեկտարից (հեկտ.) | Ցանքի տարածությունը (հեկտ.) | Միջին բերքը մեկ հեկտարից (ցենտ.) |
| 23 | Ծխախոտ | — | — | — | — |
| 24 | Շաքարի ճակնդեղ | — | — | — | — |
| 25 | Կաղամբ | — | — | — | — |
| 26 | Սոխ | — | — | — | — |
| 27 | Սխտոր | — | — | — | — |
| 28 | Տակդեղ | — | — | — | — |
| 29 | Կարաչկի | — | — | — | — |
| 30 | Բամիա | — | — | — | — |
| 31 | Գամիգոր | — | — | — | — |
| 32 | Բադրջան | — | — | — | — |
| 33 | Սեղանի գազար | — | — | — | — |
| 34 | Սեղանի ճակնդեղ | — | — | — | — |
| 35 | Սեխ | — | — | — | — |
| 36 | Ձմերուկ | — | — | — | — |
| 37 | Վարունգ | — | — | — | — |
| 38 | Դդում | — | — | — | — |
| 39 | Կարտոֆիլ | — | — | — | — |
| 40 | Կերի արմատապտուղներ | — | — | — | — |
| 41 | Խոտ միամյա | — | — | — | — |
| 42 | Խոտ բազմամյա | — | — | — | — |
| 43 | Բնական խոտ | — | — | — | — |
| 44 | Հարոսի խոտ | — | — | — | — |
| 45 | Սիլոսի բույսեր | — | — | — | — |
| 46 | Խաղող | — | — | — | — |
| 47 | Տանձ | — | — | — | — |
| 48 | Խնձոր | — | — | — | — |



| №№ ը. կ. | Կուլտուրաների անունները | Կոլտնտեսության | | Մենատնտեսի | |
|---|---|---|---|---|---|
| | | Ցանքի տարածությունը (հեկտ.) | Միջին բերքը մեկ հեկտարից (ցենտ.) | Ցանքի տարածությունը (հեկտ.) | Միջին բերքը մեկ հեկտարից (ցենտ.) |
| 49 | Ծիրան | — | — | — | — |
| 50 | Դեղձ | — | — | — | — |
| 51 | Ընկույզ | — | — | — | — |
| 52 | Սալոր | — | — | — | — |
| 53 | Բալ և կեռաս | — | — | — | — |
| 54 | Սերկևիլ | — | — | — | — |
| 55 | Թութ | — | — | — | — |
| 56 | Նուռ | — | — | — | — |

Հաշվետու ժամկետին տեղեկություն տվող կոլխոզների թիվը . . . . .

Հաշվետվության ուղարկելու ժամանակը . . . . . .

Հողբաժնի վարիչ՝

Հաշվ. տեսուչ՝

Գյուղհրատի տպարան

СОУ 89/53, Գլավլիտ 8112, պատվեր 81

ՀՀ Ազգային գրադարան
NL0937694

14 МАЯ 1936
379
11
28102